ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ք. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, ԵՐԵՎԱՆԻ Դ. ՍԱՐԱՊՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 100 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....8
ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....13
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականություն: Ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրը բոլոր ժամանակներում էլ եղել է հասարակական, քաղաքական գործիչների, լուսավորիչների, մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Ընտանեկան դաստիարակությունը դաստիարակության յուրօրինակ կարևոր և բարդ ձև է, որով էլ պայմանավորված է ընտանեկան դաստիարակության անկանխատեսելի լինելը:

Որպես սոցիալական կառույց, սոցիալական ինստիտուտ՝ ընտանիքը մեծ դեր ունի հասարակական կյանքում, քանի որ պայմանավորում է հասարակության ապագան. ընտանիքում է ձևավորվում երեխայի՝ որպես անձի անհատականությունը, նրա բարոյական հատկանիշները, այն ամենը, ինչը բնորոշում է մարդ անհատին:
Ընտանիքը յուրաքանչյուր ազգի դեմքն է, իր ուրույն ազգային հոգեբանությամբ, պատմությամբ, լեզվով, մշակույթով, կրոնով, ավանդույթներով ու ծեսերով:
Ընտանիքը պատմական զարգացման արդյունք է: Այն վաղուց դարձել է փիլիսոփաների ու պատմաբանների, ազգագրագետների, սոցիոլոգների, տնտեսագետների ու իրավաբանների, բարոյագիտության ու գեղագիտության մասնագետների, ֆիզիոլոգների ու բժիշկների, հոգեբանների ու մանկավարժների ուսումնասիրության առարկան:

Ընտանիքը ամուսնության և արյունակից հարազատության վրա հիմնված մարդկանց փոքր խումբ է, մի յուրատիպ աշխատանքային կոլեկտիվ, որիանդամներն ապրում են միասին՝ կապված կենցաղային ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ, բարոյական պատասխանատվությամբ և վարում են ընդհանուր տնտեսությունը:

Ընտանիքի կարևոր արժեքներից մեկը երեխաներն են: Երեխաների անձի դաստիարակությունը մեր կյանքի ամենակարևոր նպատակն է: Նրանք մեր երկրի ապագա քաղաքացիներն են, վաղվա հայրերն ու մայրերը, որոնք նույնպես պետք է լինեն իրենց երեխաների դաստիարակները՝ լավ հայրեր և մայրեր, մեծանան որպես հիանալի, զարգացած քաղաքացիներ:

Ընտանեկան դաստիարակությունը բարդ համակարգ է, քանի որ նրա վրա ներգործում են թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները /ժառանգականությունը, առողջությունը, սոցիալ-տնտեսական պայմանները, բնակության վայրը, ընտանիքի անդամների քանակը և այլն/:

Ընտանեկան դաստիարակությունն ընտանիքի ապրելակերպի և ծնողների ամենօրյա նպատակասլաց ազդեցությունն է երեխայի վրա: Կամ դա դաստիարակության և կրթության մի համակարգ է, որը իրականացվում է ծնողների և հարազատների կողմից կոնկրետ ընտանիքի պայմաններում:

Ընտանիքի դաստիարակչական դերը անձի համար կարևոր է ոչ միայն վաղ մանկության, այլ նաև հետագայում, հատկապես պատանեկան տարիքում, երբ ընտանիքն ունի նաև կողմնորոշիչ դեր: Ծնողների ազդեցությունը, չնայած սովորաբար այն լրացվում է մանկական կոլեկտիվի, դպրոցի և միջավայրի ներգործությամբ, այնուամենայնիվ, մարդու ողջ կյանքի ընթացքում մնում է ամենակարևորը:

Այդ ազդեցությունը կարող է լինել և՛ դրական, և՛ բացասական: Իդեալական է, երբ ընտանիքը և դպրոցը միասնական են դաստիարակության գործում: Երեխան մեծանում է, նա աստիճանաբար հաղորդակցման մեջ է մտնում այլ մարդկանց՝ չափահասների և հասակակիցների հետ, նա դառնում է տարբեր կոլեկտիվների՝ դասարանի, խմբի, ընկերակցության անդամ, որոնք նույնպես ազդում են նրա անձի ձևավորման վրա:

Ընտանիքը հանդիսանում է սոցիալականացման եզակի ինստիտուտ, քանի որ այն հնարավոր չէ փոխարինել մեկ այլ սոցիալական խմբով: Հենց ընտանիքում է իրականանում մարդու սոցիալական կյանքի առաջին հարմարողական ժամանակաշրջանը: Ընտանիքում ծնողների և երեխաների միջև գոյություն ունեցող կենսաբանական և սոցիալական կապերը չափազանց կարևոր դեր են կատարում, քանզի պայմանավորում են երեխայի հոգեկանի զարգացումը և առաջնային սոցիալականացումը: Ընտանիքի հիմնական, գլխավոր դերը կայանում է երեխային հասարակության մեջ ինտեգրելուն, որպեսզի նրա զարգացումը տեղի ունենա երեխայի բնությանը և տվյալ երկրի մշակույթին համապատասխան:

Հենց ընտանիքում են երեխաները ձեռք բերում փոխհարաբերությունների առաջին կարողությունները, ընկալում առաջին սոցիալական դերերը, գիտակցում առաջին նորմերն ու արժեքները: Առաջ են գալիս սուբյեկտիվորեն գնահատվող կարծիքներ, որոնք որոշվում են կարևոր հարաբերություններով, ձևավորվում է բնավորությունը, ընկալվում են նորմերը, զարգանում են սոցիալական հատկությունները: Սխալ դաստիարակության բոլոր դեպքերում էլ խախտվում է սոցիալական հարմարեցումը: Մյուս կողմից, ընտանիքի դրական ազդեցությունը նպաստում է անձի բարեհաջող սոցիալականացմանն ու սոցիալական հարմարողականությանը ոչ միայն մանուկ հասակում, այլև ողջ կյանքի ընթացքում:

Այն դիրքորոշումները, որոնք ձևավորում են ծնողները սոցիալական հարաբերությունների համակարգում, հետագայում որոշում են կյանքի ոճն ու ծրագիրը: Անձի զարգացման ընդհանուր համակարգում այդ ամենը ընտանիքը դարձնում է շատ կարևոր և անփոխարինելի օղակ:

Երեխայի սոցիալական արժեք ներկայացնող հատկությունների՝ հումանիզմ, հայրենասիրություն, հասարակական պարտք, ձևավորման ընթացքում ընտանիքը կիրառում է այն անհատական փորձը, որն ապահովում է ոչ միայն վարվելակերպի նորմերի իմացությունը, այլ նաև համոզմունքները, իր առօրյա կյանքում այդ նորմերը կիրառելու ձգտումը:

Դաստիարակության մեջ ընտանիքի յուրահատուկ դերը որոշվում է նաև նրանով, որ նրա ազդեցությունը երեխայի վրա սկսվում է վաղ մանկությունից, երբ նա առավել դյուրընբռնող է լինում: Շնորհիվ դրան ընտանեկան դաստիարակությունը բնութագրվում է երկարատև «հետևանքով»:

Ընտանիքում ձևավորված անձի դրական կամ բացասական կողմերը ազդում են հետագայում դպրոցում դաստիարակչական ազդեցությունների ընտրության վրա: Այն ինչը կապած է մարդուն մանկուց, այսպես թե այնպես, անդրադառնում է նրա ողջ կյանքի ընթացքում: «Ընտանիքը ոչ միայն դաստիարակում է, այլև սնում կամ էլ հակառակը, հյուծում է հիմքը հետագա հասարակական դաստիարակության համար»: Առավել կայունությամբ առանձնանում են անձնական հատկությունները,

որոնք կապված են զգացմունքային ոլորտի և այլ մարդկանց հետ հարաբերություններ ստեղծելիս:

Ընտանիքում երեխայի մոտ ձևավորվում են լավի ու վատի, գեղեցիկի ու տգեղի, բարու ու չարի առաջին պատկերացումները, անձի հիմնական պահանջմունքների հետագա զարգացման հիմքն է դրվում: Հենց ընտանիքում է նա ձեռք բերում մտերիմ մարդկանց հետ հաղորդակցվելու կարողություններ, ստանում է դեպի մեծերը սիրո, կարեկցանքի, փոխըմբռնման դասեր, այլ խոսքով՝ անցնում է մարդկանց հետ փոխհարաբերություններում անմիջական գործնական մարդասիրության դպրոցը: Եվ եթե ձևավորման վաղ փուլում ընտանիքը այդ առումով որևիցե բան չի հասցրել անել, ապա բարոյական արժեքների և զգացմունքների թերի ձևավորվածությունը կարող է անդրադառնալ կյանքի ողջ ընթացքի վրա, արտահայտվելով ընկերության, սիրո, կարեկցանքի խորը զգացմունքների դրսևորմամբ:

Դաստիարակչական գործառույթ. ընտանիքի կարևոր գործառույթն է, որն ունի երեք հիմնական կողմ.

1. Երեխայի դաստիարակումը, կարողությունների զարգացումը և անձի ձևավորումը: Ընտանիքը հանդիսանում է միջնորդ երեխայի և հասարակության միջև՝ փոխանցելով երեխային սոցիալական փորձը: Շնորհիվ ներընտանեկան շփման՝ երեխան յուրացնում է տվյալ հասարակության վարքագծի նորմերը, բարոյական արժեքները,
2. Համակարգված դաստիարակչական ընտանիքի ազդեցությունը նրա յուրաքանչյուր անդամի վրա ամբողջ կյանքի ընթացքում: Դաստիարակությունը, սկսվելով մարդու կյանքի առաջին օրերից, շարունակվում է ողջ կյանքի ընթացքում, փոխվում են միայն դաստիարակության ձևերը: Ընտանիքը հանդիսանում է յուրատեսակ դպրոց, որտեղ յուրաքանչյուրը կատարում է բազմաթիվ սոցիալական դերեր,
3. Երեխաների մշտական ազդեցությունը ծնողների, «ընտանիքի մյուս անդամների» վրա, դրդում է նրանց ինքնադաստիարակմանը:

Ուստի մեր **աշխատանքի նպատակն է** ուսումնասիրել ուսուցիչների և ծնողների համագործակցությունը երեխաների համակողմանի դաստիարակության գործընթացում:

Վերոնշյալ նպատակի իրականցման համար մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրների** պարզաբանումը՝

1. Նկարագրել դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երեխաների ընտանեկան դաստիարակության կազմակերպման հարցերում:
2. Բնութագրել դպրոցի և ընտանիքի համատեղ աշխատանքի ձևերը և բովանդակությունը:

Առաջադրված խնդիրները աշխատանքում լուսաբանվել են մանկավարժական, հոգեբանական գրականության ուսումնասիրման և վերլուծության միջոցով:

1. ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ընտանիքը մարդկության ընդհանրության ամենահին ձևերից մեկն է: Մարդկանին քաղաքակրթությունը իր զարգացման ընթացքում ստեղծել է բազում արժեքներ, որոնցից է ընտանիքը (Կ. Նալչաջյան, 2004): Գիտական գրականությունում (Ա.Գ. Խարչև, Մ. Ս. Մացկովսկի, 1982) ընտանիքը սահմանվում է որպես հասարակության բջիջ, անհատական կենցաղի կազմակերպման կարևորագույն ձև, որը հիմնվում է ամուսնական միության և ազգակցական կապերի վրա: Այսինքն՝ այն հարաբերությունների վրա, որոնք գոյություն ունեն ամուսնու և կնոջ, ծնողների ու զավակների, եղբայրների և քույրերի, այլ ազգականների միջև, որոնք ապրում են միասին և վարում ընդհանուր տնտեսություն:

Որպես սոցիալական խմբի առանձնահատուկ ու կարևորագույն տեսակ ընտանիքն այժմ աշխարհի զարգացած երկրներում գիտական ուսումնասիրությունների ու պետական հոգածության առարկա է դարձել: Ընտանեկան հիմնահարցերը ուսումնասիրում են ազգագրագետները, հոգերանները, մանկավարժները, սոցիոլոգները և այլ բնագավառների մասնագետներ:

Ընտանեկան դաստիարակության կարևորության, ծնողների՝ իրենց երեխաների դաստիարակության գործում ակտիվանալու մասին բազմիցս նշում են հայ մանկավարժները, դա նամանավանդ կապված է վերջին տարիների սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական մեծ տեղաշարժերի հետ: Ընտանեկան դաստիարակությունը այժմ առավել, քան երբևէ, մեծ նշանակություն է ստացել: Փոփոխվող ուսումնական ծրագրերի և դասագրքերի, դաստիարակության ընդհատումների պայմաններում ընտանիքը պետք է հանդիսանա այն հաստատուն վայրը, որտեղ երեխան կկարողանա բավարարել իր հոգեկան և ֆիզիկական հարցադրումները և պահանջմունքները՝ որպես սոցիալական էակ: Դրա համար ծնողների մանկավարժական լուսավորվածությունը դարձել է հրամայական պահանջ: Աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ կրթության ու դաստիարակության հիմնական նախապայման ու միջոց է հանդիսանում մանկավարժական, ծնողական

հասարակության և պետական կառույցների դաշինքը (Հ. Մ. Մախչանյան, 1997, Գ. Ե. Ղույումչյան, 2005): Անվանի մանկավարժները կարևորում են նաև ծնողների մանկավարժական լուսավորվածությունը (ծնողական համալսարաններ, կրթօջախների գիտամանկավարժական կրթության գծով տարվող աշխատանքներ, տեղեկատվական միջոցներով մանկավարժական գիտելիքների քարոզչություն և այլն):

Շարունակելով պրոֆեսոր Մախչանյանի միտքը՝ Ն. Հարությունյանը (1997) գտնում է, որ «Ելնելով այն բանից, որ ընտանիքը շատ բարդ ու համընդհանուր ուսումնասիրությունների կարևոր օբյեկտ է, առաջարկում ենք մեր հանրապետությունում ստեղծել «Ընտանիք» համակարգային հետազոտությունների կենտրոն: Դա հիմնավորվում է մեզանում ստեղծված խիստ լարված սոցիալ-տնտեսական և հոգեբանական իրավիճակով, ազգային արժեքների և լավագույն ավանդույթների վերակառուցման անհրաժեշտությամբ, մեր ազգի համար ընտանիքի ավանդական կարևոր դերի՝ վերջին տասնամյակում կրած նվազումով, որի հետևանքներն ավերիչ եղան նաև դուտիարակության գործում»:

Հայ մեծ լուսավորիչ և մանկավարժ Ս. Պալասանյանը (1837-1889) ազգային լուսավորության հիմնական նպատակը համարելով մարդկանց բարոյական, մտավոր ու ֆիզիկական դաստիարակությունը, այսինքն՝ անհատի համակողմանի զարգացումը, այն դիտում է որպես անհատի համար մեծ արժեք ունեցող մի երևույթ, առանց որի անհնար է անհատական և հասարակական (ազգային) պահանջների իրականացումը:

Ընտանիքը կատարում է շատ մեծ հասարակական ֆունկցիա.

1. Բնակչության վերարտադրություն.
2. Տնտեսական խնդիրների լուծում.
3. Երեխաների դաստիարակություն.
4. Առողջարարական և ռեկրեատիվ հարցեր.
5. Հասարակության կառավարման ու կարգավորման խնդիրներ:

Ինչպես նշում է Ա. Ա. Նալչաջյանը (1991), հայկական ընտանիքներում անձի սոցիալ-հոգեբանական հասունության պրոբլեմը խորը ուսումնասիրություններ է

պահանջում: Մասնավորապես ինչ գիտելիքներ, հմտություններ ու հոգեբանական առանձնահատկություններ պետք է ունենան ամուսինները՝ ազգային տեսանկյունից լիարժեք և կայուն ընտանիք ստեղծելու համար:

Հայկական ազգային ընտանեկան ավանդույթներն ու սովորությունները ձևավորվել են դարերի ընթացքում (Բ. Լ. Անաստասյան, 1991): Կուտակվել և սերունդներին է փոխանցվել երեխաների ընտանեկան դաստիարակության, ներընտանեկան փոխհայաբերությունների, ազգային ծեսերի, ավանդույթների հարուստ փորձ: Հայ ժողովրդի զարգացման պատմական յուրաքանչյուր ժամանակահատվածում հասարակական կյանքի սոցիալ-հոգեբանական փոխհարաբերությունների ազդեցության տակ դրանք հղկվել, ավելի գեղեցիկ են դարձել, դարձել ժամանակի պահանջներին համահունչ:

Հոգևոր կյանքում ընտանիքի ամենակարևոր ֆունկցիաներից է երեխաների դաստիարակությունը: Ընտանեկան դաստիարակության յուրսհատկությունն ու անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն իր բնույթով ավելի զգացմունքային է, շարունակական, անհատական: Ինչպես նշում են Ա. Գ. Խարչևը և Մ. Ս. Մացկովսկին, ընտանիքը ոչ թե միատարր, այլ տարբերակված սոցիալական խումբ է: Նրանում ներկայացված են տարիքային, սեռային, երբեմն էլ նույնիսկ նաև մասնագիտական տարբեր «ենթահամակարգեր»: Այդտեղ երեխային հնարավորություն է ընձեռվում՝ առավել լայնորեն դրսևորելու իր հուզական և հոգևոր ունակությունները, ավելի արագ իրականացնելու դրանք: Միաժամանակ ընտանիքն ունի հատուկ, լրացուցիչ, միայն իրեն հատուկ հնարավորություններ: Դա ամենից առաջ մարդու հուզական կուլտուրայի, սովորությունների արտաքին վարքի ձևավորումն է և նրա սեռական դաստիարակությունը:

Ընտանեկան դաստիարակությանը մեծ նշանակություն են տվել հանրահայտ մանկավարժները (Հ. Ս. Մախչանյան, Ա. Ս. Մանուկյան 1997; Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան 2005; Գ. Ե. Ղույումչյան, 2005):

Ա. Ս. Մակարենկոն ընտանեկան կոլեկտիվի դաստիարակչական աշխատանքի առաջնային պլան է մղում պահանջների ընտրությունը և ճիշտ դաստիարակությունը, նրանց հասցնումը բարոյական բարձրության: Նա ասել է.

«Ընտանիքները լինում են լավ և ընտանիքները լինում են վատ: Երաշխավորել այն, որ ընտանիքը դաստիարակում է, ինչպես պահանջվում է, չի կարելի: Ասել, որ ընտանիքը կարող է դաստիարակել, ինչպես ցանկանում է, մենք չենք կարող: Մենք պետք է կազմակերպենք ընտանեկան դաստիարակությունը»:

Ըստ С. Г. Крамаренко-ի կարծիքի՝ ընտանիքները իրենց մանկավարժական կուլտուրայի յուրացման աստիճանով բաժանվում են 3 խմբի՝

1-ին բարձր մակարդակ, ընտանեկան դաստիարակության վերաբերյալ ունեն խորը և գիտակցված գիտելիքներ,

2-րդ միջին մակարդակ, մանկավարժության վերաբերյալ ունեն թույլ գիտակցված և նվազագույն գիտելիքներ,

3-րդ ցածր մակարդակ, ընտանեկան դաստիարակության վերաբերյալ ունեն մասնակի կամ ընդհանրապես չունեն գիտելիքներ, անտարբեր են իրենց երեխաների հանդեպ և այլն:

Ընտանեկան կյանքը, ըստ մանկավարժական նպատակահարմարության դրվածքի, նույնպես բաժանվում է 3 տեսակի՝

1-ին բարենպաստ. բնութագրվում է ընտանեկան հոգևոր կյանքի առաջնային ուղղվածությամբ, բարոյական և աշխատանքային բարենպաստ մթնոլորտը և այլն,

2-րդ հակասական դրվածք. երբ թեև հոգևոր կյանքը առաջնային է և կան սոցիալապես արժեքավոր արժեքներ՝ բարոյական և աշխատանքային մթնոլորտը հակասական է, երեխաների և մեծերի միջև հարաբերությունները ձևավորվում են տարերայնորեն և այլն.

3-րդի ժամանակ բնորոշ է ընտանիքի անդամների միջև չկարգավորված հարաբերություններ, անձնական հարաբերություններում ոչ հումանիստական դրսևորումներ, նյութական պահանջների գերակայությունը հոգևորի նկատմամբ:

Դաստիարակչական խնդիրները, որոնք լուծում են ծնողները իրենց ֆունկցիաները կատարելիս, բաժանվում են 2 խմբի՝ ստրատեգիական և օպերատիվ: Դաստիարակության օպերատիվ, տակտիկական խնդիրները լուծելու համար, որոնք վերաբերում են երեխայի առանձին արարքների և գործողությունների կարգավորմանը, ծնողներին բավարար են մանկավարժ-մասնագետի կոնկրետ

առանձին խորհուրդներ և սոաջարկություններ: Ծնողների գործունեության մեջ ստրատեգիական խնդիրները հետապնդում են հեռանկարային նպատակներ՝ երեխայի մոտ ձևավորել որոշակի աշխարհայացքային և բարոյական սկզբունքներ, կուլտուրական վարքի հմտություններ, մտավոր զարգացվածություն և այլն: Դրանց իրականացումը հնարավոր է միայն մանկավարժական գիտելիքների համակարգի յուրացման դեպքում, այդ գիտելիքները համոզմունքների վերածելու և այդ համոզմունքները որոշակի նպատակաուղղված գործունեության դրսևորելու դեպքում:

Երեխայի անձի բազմակողմանի ներդաշնակ զարգացումը պահանջում է մեծերի կողմից երեխայի վրա ազդող դաստիարակչական-կրթական ամբողջ համակարգի միասնություն, համաձայնություն: Ընտանիքի դերը այդպիսի համաձայնության մեջ դժվար է գերագնահատել, չէ՝ որ հենց ընտանիքում են երեխաները ստանում բարոյականության առաջին դասերը, ձևավորում նրա բնավորությունը:

Ուսուցիչն ու ծնողը, իրենց ամենօրյա ուշադրության կենտրոնում պահելով առողջ երեխայի մեծացնելու կարևորագույն խնդիրը, դրանով միաժամանակ օժանդակում են աշակերտների հոգևոր զարգացմանը: Չէ որ ֆիզիկապես թույլ երեխային է ամենից առաջ հարկավոր խաղալ, վազել ցատկել: Մինչդեռ շատ հաճախ ծնողներն այդ չեն հասկանում, և իրենք են անմիջական «ղեկավարում» երեխայի ֆիզիկական սխալ դաստիարակությունը, երբեմն նույնիսկ երեխային հիշեցնում նրա հիվանդության մասին՝ դրանով իսկ ճնշում գործադրելով նրա հոգեկան աշխարհի վրա:

Կրտսեր դպրոցականների համակողմանի դաստիարակության իրականացման ամենանպաստավոր պայմանը հանդիսանում է դպրոցի և ընտանիքի գիտակցված համագործակցված միությունը: Այս հասարակական ինստիտուտներից յուրաքանչյուրը յուրովի է մասնակցում աշակերտների դաստիարակության գործընթացին, յուրաքանչյուրը ունի իր առավելությունները, ներգործելու ձևերը և միջոցները:

Սովորողների ինտելեկտը և զգացմունքը համարվում է այն օբյեկտը, որի միջոցով բեկված անցնում են դպրոցի և ընտանիքի դաստիարակչական

ազդեցությունը: Եվ այստեղ դրական արդյունքները բարձր են այնքան, որքան ամուր և ներդաշնակ են այդ ազդեցության միասնությունը: Մանկավարժների ու ծնողների մոտ նպատակն մեկն է՝ օգնել երեխաներին համամարդկային արժեքների տիրապետմանը, զարգացնել նրանց միտքը, սիրտը, հոգին:

Դպրոցի և ընտանիքի փոխհամագործակցության պրոբլեմի պատասխանը կայանում է հետևյալում՝ խոսքը պետք է գնա դպրոցի և ընտանիքի՝ որպես հավասարազոր և հիմնական սուբյեկտների փոխլրացման մասին: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ երբեք չպետք է սահմանափակել ընտանիքի ֆունկցիաները, չիջեցնել պատասխանատվությունը, այլ լայնացնել խնդիրները, խորացնել ընտանիքում դաստիարակչական գործընթացը՝ նրանում ընդգրկելով մանկավարժական կոլեկտիվը: Այս ամենը կբարձրացնի և ուսուցման և դաստիարակության որակը:

2. ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդի պայմաններում մանկավարժական գրականության մեջ հանդիպում է այն տեսակետը, որ ընտանիքում երեխաների վրա ունեցած տարերային ազդեցությունը փոխարինվել է գիտակցված, նպատակաուղղված ազդեցությամբ: Այն պահանջում է ծնողների և մանկավարժների ճիշտ դիրքորոշում, որը ենթադրում է մանկավարժական, հոգեբանական, իրավական գիտելիքների որոշակի իմացություն և դրանց մշտական կիրառում առօրյա կյանքում:

Ըստ նրանց՝ ուսուցիչները պետք է օգնեն ընտանիքի կյանքը մանկավարժորեն նպատակահարմար կազմակերպել: Այդ նպատակի համար օգտագործելով ծնողական կոմիտեները, ընտանիքի և դպրոցի փոխներգործությունում խորհուրդների օգտագործումը՝ նույնիսկ ծնողների վրա ազդել սովորողների միջոցով:

Չէ որ դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է նրանով, թե ինչպիսի ծնողական գնահատականի կարժանանա դպրոցը և կհասնի՝ արդյոք այդ գնահատականը

երեխային, չկան արդյոք հակասություններ ընտանիքի և դպրոցի արժեքային ընկալումների համակարգերի միջև:

Աշակերտը՝ հատկապես կրտսեր դպրոցականը, նայում է դպպոցական դաստիարակչական միջոցառումներին հիմնականում ծնողների աչքերով: Եվ միևնույն ժամանակ նա գնահատում է ընտանեկան մթնոլորտը հիմնականում դպրոցի աչքերով և նրա բարոյական արժեքների տեսանկյունից:

Սովորողի ինտելեկտը և զգացմունքը համարվում են այն օբյեկտիվը, որի միջոցով բեկված անցնում է դպրոցի և ընտանիքի դաստիարակչական ազդեցությունը: Եվ այստեղ դրական արդյունքները բարձր են այնքան, որքան ամուր և ներդաշնակ է այդ ազդեցության միասնությունը:

Հաշվի առնելով այս ամենը՝ մենք պետք է ընտանիքի և դպրոցի հարաբերությունները դիտարկենք ոչ միայն ծնողների մանկավարժական լուսավորվածության տեսանկյունից, թեև դա փոխգործունեության շատ կարևոր կողմ է, այլ ծնողների կողմից իրենց գիտելիքների և սոցիալական լավագույն փորձի անմիջական ներդրում դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքներին:

Ոչ միայն ուսուցիչները պետք է մատնանշեն ծնողներին ընտանեկան դաստիարակության մեթոդների և բովանդակության թերությունները, այլև ծնողները մանկավարժներին՝ դպրոցի աշխատանքի բացթողումները, թերացումները: Իհարկե, դպրոցի քննադատությունը ծնողների կողմից պետք է լինի հիմնավորված, արժեվորված և կոնստրուկտիվ:

Հենց ծնողների հետ շփումների ժամանակ՝ պաշտոնական և ոչ պաշտոնական՝ զրույցներ և քննարկումներ և այլն, մանկավարժները կարող են տեսնել և ձևակերպել ոչ միայն ընթացիկ, այլ նաև իրենց գործունեության հեռանկարային խնդիրները: Ծնողների հետ շփումները ունի մի տեսակետ ևս. թույլ է տալիս ոչ միայն ստանալ առավել ամբողջական տեղեկություն սովորողի մասին, առավել խորը ուսումնասիրել նրա հետաքրքրությունները և սովորությունները, հակումները և այլ հոգեբանական յուրահատկությունները, այլ նաև հարստացնում է մանկավարժներին նոր ինֆորմացիայով, լայնացնում է մտահորիզոնը, ավելացնում է կուլտուրական զինանոցը, իսկ երբեմն և մանկավարժական գիտելիքների զինանոցը:

Մանկավարժական գրականության մեջ ընտանիքի և հանրակրթական ուսումնական հաստատության փոխգործունեության ձևերի ցանկը բավականին լայն է՝ ան հատական հանդիպումներ, զրույցներ, երկխոսություններ, մանկավարժական գիտելիքների բարձրացման պարապմունքներ, ծնողական ժողովներ, բաց դասեր, հանդիպումներ հանրահայտ մանկավարժների հետ, կինոֆիլմերի դիտում և քննարկում, մանկավարժական գրականության բաժանում, մանկավարժական պրակտիկումներ:

Որոշ մանկավարժներ առաջարկում են դպրոցի կաբինետային համակարգը լրացնել ծնողների համընդհանուր լուսավորության կաբինետով, մյուսները որպես աշխատանքի առավել արդյունավետ ձև նշում են անհատականը: Մասնագետների մի խումբ առավելությունը տալիս են համադպրոցական ծնողական ժողովներին, որոնք օգնում են սովորողների ծնողներին՝ համախմբվելու մեկ կոլեկտիվում, բարձրացնում են յուրաքանչյուր ընտանիքի պատասխանատվության աստիճանը, տարածում է երեխաների դաստիարակության և ուսուցման դրական փորձը ընտանիքներում, օգնում ընտանեկան դաստիարանությունը ղեկավարել և կազմակերպել համընդհանուր ձևով:

Դեռ ավելին՝ համադպրոցական և ծնողական ժողովները թույլ են տալիս ծնողներին արտահայտելու իրենց կարծիքը, կրել կոլեկտիվ պատասխանատվություն, միասնական պահանջներ՝ ուղղված երեխաների դաստիարակության գործին և ձևավորելու ծնողական կոլեկտիվի մանկավարժական կուլտուրան:

Ուսուցչի կողմից անցկացված մանկավարժական զրույցը ծնողներին հարկադրում է մտածել դաստիարակության հարցերի շուրջ, քննադատտրեն գնահատել դաստիարակության պրակտիկան, անհրաժեշտ փոփոխություններ մտցնել ընտանիքում երեխայի դաստիարակության պայմանների մեջ, բարելավել դաստիարակության մեթոդները:

Г. К. Байдельдинова-ն, ընտանիքի և դպրոցի փոխգործունեության առաջնային խնդիր է համարում մի շարք գիտամանկավարժական խնդիրների լուծումը՝

1. Ուսումնասիրել դասարանի ծնողական կոլեկտիվը, յուրաքանչյուր ընտանիքի յուրահատկությունը:

2. Բացահայտել աշակերտների ուսումնական և արտաուսումնական գործունեության կազմակերպման յուրահատկությունը ընտանիքում և ծնողների վերաբերմունքը նրանց նկատմամբ:
3. Այդ գիտելիքների հիման վրա պլանավորել և կոորդինացնել ծնողներին գործնական օգնություն ցույց տալու աշխատանքը:

Վերջին ժամանակներս ֆիզիկական կուլտուրայի տեսաբանները իրենց աշխատանքներում բազմիցս ընդգծում են դպրոցականների կյանքում ֆիզիկական դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի տարրերի կիրառման անհրաժեշտությունը, որի իրականացումը մեծապես պայմանավորված է դպրոց ընտանիք համագործակցությամբ, ծնողների վերաբերմունքով, պատրաստության աստիճանով՝ կախված նրանց գիտելիքներից, կարողություններից, արժեքային կողմնորոշումից, որի ձևավորման հիմնական օղակը պետք է հանդիսանա հանրակրթական դպրոցը: Նման արժեքների ձևավորումը բարդ գործընթաց է և պահանջում է դպրոցում կրթադաստիարակչական աշխատանքների փոփոխություններ այս ուղղությամբ:

Մասնագետները նշում են, որ հանրակրթական դպրոցները չեն կազմակերպում համապատասխան աշխատանքներ կրտսեր դպրոցականների ծնողների հետ, երեխաների մտավոր, գեղագիտական, բարոյական և ֆիզիկական դաստիարակությունը ընտանիքում իրականացվում է դեպքից դեպք, որը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին:

Նույն փաստն է արձանագրում նաև А.С.Гринюк-ը և առաջարկում է դպրոցականների ընտանեկան ֆիզիկական դաստիարկության համար առաջին հերթին բնակավայրերում ստեղծել համապատասխան պայմաններ, երկրորդ՝ դպրոցի և ընտանիքի համագործակցությունը կառուցել հաջորդականության սկզբունքի հիման վրա, երրորդ՝ ծնողների համար կազմակերպել տարբեր միջոցառումներ անհրաժեշտ գիտելիքների հաղորդման համար և չորրորդ՝ կազմակերպված աշխատանքների մեջ ներգրավել հասարակական կազմակերպություններին:

Ուզբեկստանում կատարված հետազոտություններում ընդգծվում է, որ չնայած հանրակրթական դպրոցում ծնողների շրջանում կատարում են որոշակի աշխատանքներ, սակայն այն ավելի շուտ կրում է ձևական բնույթ: Նման եզրակացության հեղինակները հանգել են ծնողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հետազոտությունների ընթացքում (Ա. Աթաև, 1995):

Կարևորելով դպրոց-ընտանիք համագործակցության անհրաժեշտությունը և աշխատանքի արդյունավետության բարձրացման ճանապարհները, այնուհանդերձ հեղինակները չեն նշում առողջ ապրելակերպի, նրա տարրերի նպատակային կիրառման ուղիները, բացակայում են համապատասխան ծրագրերը: Կրտսեր դպրոցականների մոտ առողջ ապրելակերպ ձևավորելու համար հայ իրականության մեջ ընդհանրապես այս ուղղությամբ գիտականորեն հիմնավորված որևէ աշխատանք չի իրականացվել: Առողջ ապրելակերպը կրտսեր դպրոցականների մոտ արդյունավետ ներդնելու համար նախատեսվող աշխատանքները պետք է իրականացնել ամբողջական ճակատով թե ծնողների, թե՝ դպրոցական կոլեկտիվի և թե՝ երեխաների համար նախատեսված մատչելի ծրագրերի առկայությամբ:

Գրական աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս՝ մանկավարժության տեսության և պրակտիկայի ասպարեզում մշակված են հանրակրթական դպրոցի և ընտանիքի հետ տարվող համատեղ աշխատանքի ձևերը և բովանդակությունը, ցույց է տրված այդ աշխատանքի արդյունավետությունը կրտսեր դպրոցականների համակողմանի դաստիարակության հարցերում:

Որպեսզի ծնողների հետ տարվող աշխատանքը ավելի մեծ արդյունք տա, անհրաժեշտ է օգտագործել վերը նշված ձևերը զուգակցված, համալիր: Հետևաբար դասվարները բավականին լուրջ աշխատանք պետք է կատարեն ծնողների շրջանում ֆիզկուլտուրային գիտելիքների քարոզչության ուղղությամբ, որը դասվարներից պահանջում է ունենալ համապատասխան պատրաստություն: Մյուս կողմից կրտսեր դպրոցականների ընտանեկան դաստիարակության վերաբերյալ դասվարների կողմից տարվող աշխատանքների բացակայության դեպքում, ոչ միայն խախտված է, դասվարների կողմից ծնողների խորհրդատվության գործընթացը, այլև

հանրակրթական դպրոցի աշխատանքը: Այդ մասին է վկայում առաջատար դպրոցների աշխատանքների ուսումնասիրությունը:

Հարկ է փաստել, որ աշակերտների ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրներին վերաբերվող աշխատանքների մեծամասնությունը նվիրված է ընտանիքի և դպրոցի համատեղ աշխատանքին:

Ծնողների իրազեկումը, նրանց մանկավարժական կուլտուրայի բարձրացման հիմնախնդիրները չի կարելի համարել նոր, սակայն այն մինչ այժմ չի գտել իր տեսական և գործնական լուծումը, քանզի բացակայում է ծնողների հետ կազմակերպվող աշխատանքի բովանդակությունը, հանրակրթական դպրոցի ծրագրում այն որևէ կերպ շեշտադրված չէ: Այդ պատճառով մեր աշխատանքում անդրադարձել ենք համատեղ աշխատանքների կազմակերպմանը:

Ծնողական ժողովները ընտանիքի հետ դասվարի կապի ամենատարածված ձևն են: Ծնողական ժողովներն անց են կացվում ուսումնական տարվա սկզբին, ուսումնական կիսամյակի վերջին:

Դասախոսությունները մենք նպատակահարմար ենք գտնում անցկացնել անմիջապես սեպտեմբեր ամսին՝ անդրադառնալով աշակերտների զարգացման տարիքային առանձնահատկություններին: Այսպես՝ ավելի հեշտ է մանկավարժության և հոգեբանության տեսական դրույթների զուգակցումը ընտանեկան ֆիզիկական դաստիրակության պրակտիկայի հետ՝ «Կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների մշակման առանձնահատկությունները», «Ֆիզիկական կուլտուրան և դպրոցականների առողջությունը»:

Հարկավոր է ծնողներին առաջադրել, որ նրանք իրենց հերթին տանն անցկացնեն լսված թեմայի շուրջ զրույցներ երեխայի հետ նրանց համար մատչելի տարբերակով: Ծնողների մանկավարժական կուլտուրայի մակարդակի բարձրացման կարևոր և նույնիսկ առավել բարձր եղանակ հանդիսանում են պրակտիկումները:

Դասախոսությունների ժամանակ ծնողները ամեն անգամ չեն կարողանում ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, մեծ լսարանում նրանք հնարավորություն չեն ունենում հարցեր տալ դասախոսին: Ուստի առանձին դասարաններում պետք է անցկացնել պարբերական կոնսուլտացիաներ ընտանեկան

դաստիարակության հարցերի վերաբերյալ: Խորհրդատվության ժամանակ ծնողները դասախոսի, ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ կարող են զրուցել ցանկացած հարցի շուրջ և ստուգել իրենց կարծիքը: Սովորաբար ծնողներին հետաքրքրում է երեխաների առողջական վիճակը, որևէ մարզաձևով պարապելու անհրաժեշտությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ***Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս.,*** Մանկավարժություն. ուսումնական ձեռնարկ.- Երևան.- Մանկավարժ.- 2005.- 456 էջ
2. ***Անասպասյան Բ.Հ.*** Ազգային ավանդույթների, սովորությունների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում. Ժող. ընտանիք և ազգային հոգեբանություն.- Երևան.- 1991.- էջ 21-36
3. ***Խարչև Ա.Գ., Մացկովսկի Մ.Ս.,*** Ժամանակակից ընտանիքը և նրա պրոբլեմները. (Սոցիալ-դեմոգրաֆիական ուսումնասիրություն).- Երևան.- Հայաստան.- 1982.- 272 էջ:
4. ***Հարությունյան Ն.,*** Ընտանեկան դաստիարկության ժամանակակից խնդիրները //Թեզիսներ «Անչափահասների դաստիարակության խնդիրները շուկայական հարաբերությունների պայմաններում» միջազգային գիտաժողովի զեկուցումների.- Երևան.- 1997.- էջ 5
5. ***Ղույումչյան Գ.Ե.***, Մանկավարժություն. դասագիրք բուհերի համար, գիրք II.-Երևան.- Զանգակ-97.- 2005.- 232 էջ
6. ***Մախչանյան Հ.Մ., Մանուկյան Ա.Ս.,*** Մանկավարժության ընդհանուր հիմունքներ. ուսումնական ձեռնարկ բուհերի համար.- Երևան.- ԵՊՀ հրատարակչություն.- 1997.- 219 էջ
7. ***Նալչաջյան Կ.***, Ընտանեկան կյանքի փակ էջերը.- Երևան.- Զանգակ-97.- 2003.- 240 էջ
8. ***Նալչաջյան Ա.Ա.***, Ազգային հոգեբանություն և ընտանիք. Ընտանիք և ազգային հոգեբանության ժող.- Երևան.- 1991.- էջ 3-8